Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºîàôÂÚàôÜ
ø²Ô²ø²ÞÆÜàôÂÚ²Ü Ü²Ê²ð²ðàôÂÚàôÜ
Ü²Ê²ð²ðÆ îºÔ²Î²È

ÐÅÑÏÓÁËÈÊÀ ÀÐÌÅÍÈß
ÌÈÍÈÑÒÅÐÑÒÂÎ ÃÐÀÄÎÑÒÐÎÈÒÅËÜÑÒÂÀ
ÇÀÌÅÑÒÈÒÅËÜ ÌÈÍÈÑÒÐÀ

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510. ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, չ.ԺՐպՉՈվ,տս.ՀպրտցուՌՍՌ,
ԺՏՎ ԿՐՈՉՌՑպսՖրՑՉՈ 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

---------------------- N --------------------------------

Ò»ñ N -------------- ³é -----------------------------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
Խրիմյան Հայրիկ փողոց,
N 116/192 տնակ
Հասմիկ Մկրտչյանին

Հարգելի տիկին Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր 2011 թվականի հունիսի 13-ի դիմումում բարձրացված՝ Գյումրի քաղաքում 2011 թվականին պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Ձեր ընտանիքն ընդգրկելու հարցի կապակցությամբ հայտնում եմ.

ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի դրույթների համաձայն՝ քաղաքային բնակավայրերում իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում առաջնահերթ կարգով լուծվում են պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած անձանց բնակարանային խնդիրները:

Ինչ վերաբերում է անհատական բնակելի ֆոնդում բնակելի տուն կորցրած անձանց, այդ թվում նաև Ձեր բնակարանային պայմանների բարելավման հարցին, ապա դրա քննարկմանը հնարավոր է անդրադառնալ հետագա տարիներին՝ վերը նշված հայեցակարգով աղետի գոտու բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման նկատմամբ ձևավորված պարտավորությունները կատարելուց հետո՝ այդ ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի շրջանակներում:

Ա.Հակոբյան

Ե.Աթայան
52-46-80